Զամախի եկող առաջնորդները, եպիսկոպոսները միշտ ընդունելութիւն են գտել Պօղոս աղայի տանը. ամենքին եւս մեծ հիւրասիրութիւն է ցոյց տուել և ընծայով յարգել։

1826 թ. Պարսից պատերազմի ժամանակ, երբ ռուսաց զօրքը Զամախուց գնաց Դուբայ քաղաքի զօրքի հետ միանալու, Մուստաֆայ խանը պարսից զօրքի հետ իւր հեծելազօրքով մտաւ Զամախի քաղաքը և սկսեցին հայերին ծեծել, նեղացնել, երկու հայի խեղդելով սպանեցին։ Այդ ժամանակ Պօղոս աղան իմանալով իրեն հաւատարիմ մարդկանցից, թէ մի քանի թուրք մոլլաներ չարախօսութիւն են արել հայերի դէմ Մուստաֆայ խանին, թէ «քո հարկերը մնում է հայերի վերայ, նրանց պէտք է պատժել», այդ հանդամանքի առաջն առնելու համար խան Պօղոսը իւր սեպհականութիւնից երկու հազար բաջաղլու ոսկի, մի ափսէի մէջ և մի այլ ափսէում պատրաստած զանազան քաղցրաւենիքներով ընծաներ ուղարկում է խանի համար. ինքն էլ գնում ներկայանում է խանին. խանը հարցնում է —սա ի՞նչ է, խան Պօղոս։ Վերջինս պատասխանում է, —խանը ողջ լինի, սա հայերի կողմից ընծայ է մեծ խանիդ։—

Սիրով ընդունում է Մուստաֆայ խանը ուղարկած ընծաները, և գովում Պօղոս աղային, թէ ես քեզ համար լաւ բաներ եմ լսել իմ սիրելի հաջի Մահմուտ էֆէնտիից և հաջի Արտուլլայից. յետոյ հրամայում է հայերի փողոցների և տների վերայ պահապաններ կարգել, որ ո՛չ ոք նեղութիւն չ'պատճառէ հայերին։

Անցած մի տասն օր, երբ լուր հասաւ, թէ Ամիրխան սարդարը յաղթուելով զօրապետ Պասկեվիչի ձեռքի տակ եղած ռուսաց զօրքից՝ սպանուեցաւ, պարսից զօրքը և խանը կրկին փախան դէպի պարսից երկիրը։ Այդ խառն աղմկալից ժամանակ կուսակալ Երմալովը այցելութիւն է դուրս գալիս երկրին. գալիս է Զամախի, ուղարկում է իւր թարգման Միրզաջան բէգ Մաղաթովին խան Պօղոս բէգի մօտ, որ տեղեկանայ նորանից, թէ ո՞ր թուրքերն են նեղութիւն և մահ պատճառել հայերին, այն դիտաւորութեամբ, որ կախել տայ նրանց։ Խան Պօղոս բէկը պատասխանում է, թէ նոքա, որոնք բռնութիւն